

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՕԲՅԵԿՏԸ.  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ**

**1. Առևտրային գաղտնիքի օբյեկտի հասկացությունը**

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը քաղաքացիական իրավունքների օբյեկտների տեսակների շարքում նշում է **տեղեկատվությունը**<sup>2</sup> և մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականությունը) (132-րդ հոդված): Տեղեկատվության (ոչ էլ՝ տեղեկության) իրավական **հասկացությունը** ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի սահմանում: Տ. Կ. Բարսեղյանը, օրինակ, **ընդհանուր առմամբ** տեղեկատվությունը (հատակեցումը մերն է) բնորոշում է որպես շրջապատող աշխարհի վերաբերյալ տվյալների համակցություն, ոչ նյութական օբյեկտ<sup>3</sup>:

Տեղեկություն հասկացությունը իր ամրագրումն է գտել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում. վերջինիս 3-րդ հոդվածը այն սահմանում է՝ որպես «անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)»: Հարկ է, սակայն նշել, որ այս հասկացությունը բովանդակային առումով շատ ավելի լայն է, քան «քաղաքացիաիրավական» տեղեկատվությունը: Բանն այն է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկա հարաբերությունները առաջին հերթին վարչաիրավական են, ուստի, իշխանական լծակ-

---

<sup>1</sup> ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյան:

<sup>2</sup> ՀՀ իրավական ակտերի մեջ չկա միասնական մոտեցում. ոչ տեղին են օգտագործվում «տեղեկություն» և «տեղեկատվություն» եզրույթները՝ որպիսի մոտեցումը չի կարող արդարացված լինել, սակայն այդ հարցը սույն աշխատանքում շրջանցվում է՝ նպատակ ունենալով քննարկել հետագա հետազոտություններում:

<sup>3</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.**, Քաղաքացիական իրավունք, Դասագիրք / Գ. Հ. Ղարախանյանի խմբագրությամբ, 3-րդ հրատ..., Առաջին մաս, ԵՊՀ, Երևան, 2006 թ., էջ 196-197:

ներով օժտված սուբյեկտներից տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները սահմանելիս տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, անձի սահմանադրաիրավական ազատության արդյունավետ ապահովման տեսանկյունից հարկ է հնարավորինս ընդարձակել տեղեկատվության (տվյալ դեպքում՝ տեղեկության) բովանդակային սահմանները:

Փիլիսոփայական տեսանկյունից տեղեկատվությունը կարելի է ներկայացնել՝ որպես շրջապատող աշխարհի առարկաների և երևույթների մասին գիտելիքներ պարունակող իրականության արտացոլման արդյունք<sup>4</sup>: **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը ևս համանման մտեցում է ցուցաբերում՝ այնուամենայնիվ փոքր-ինչ հստակեցնելով տեղեկատվության աղբյուրների շրջանակը:**

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը հստակեցնում է **տեղեկությունների այն շրջանակը**, որ կարող են լինել չբացահայտված տեղեկատվության<sup>5</sup> առարկա՝ օրենքով պաշտպանվող տվյալներ: Դրանք են արտադրության եղանակները, քիմիական բանաձևերը, գծագրերը, փորձնական նմուշները, ապրանքի վաճառքի և բաշխման եղանակները, պայմանագրի ձևերը, գործարար ծրագրերը, պայմանագրային գների մանրամասնությունները, սպառողների մասնագիտական գործունեության ոլորտները (պրոֆիլները), գովազդման ռազմավարությունը, մատակարարների կամ հաճախորդների ցուցակները, համակարգչային ծրագրային ապահովումները, տվյալների հիմնապաշարները (բազաները) և այլն: Ինչպես տեսնում ենք, այս շրջանակը բավականին լայն է և շարունակելի: Կարելի է ենթադրել, որ գիտության ցանկացած ճյուղի ցանկացած տվյալ կարող է հանդիսանալ օրենքով պաշտպանվող տեղեկատվություն, եթե օժտված է չբացահայտված տեղեկատվության հատկանիշներով:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մար-

<sup>4</sup> Ст' у Философия науки/Под ред. С. А. Лебедева. 3-е изд. М., 2006, էջ 36–43:

<sup>5</sup> Ինչպես կտեսնենք սույն ուսումնասիրության հետագա շարադրանքում, չբացահայտված տեղեկատվությունն ավելի լայն բովանդակային ծավալ ունի՝ իր մեջ ներառելով նաև առևտրային գաղտնիքը: Ուստի այդ երկու հասկացությունները հավասարապես գործածվում են սույն աշխատանքում՝ որոշ տեղերում՝ որպես համարժեքներ:

մինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը: Ինչից հետևում է, որ նշված օրենքը բացի քաղաքացիաիրավական հարաբերություններից «ծածկում է» նաև իրավունքի այլ ճյուղերի (այդ թվում՝ վարչական իրավունքի) կողմից կարգավորվող իրավահարաբերություններ, ինչը բնավ չի խոչընդոտում նշված համալիր օրենքով նախատեսված իրավական կարգավորումների՝ կիրառմանը քաղաքացիաիրավական ոլորտում: Ուստի, կարծում ենք՝ շարադրված շրջանակը կարող է լիովին կիրառելի լինել «քաղաքացիական իրավունքների օբյեկտ» տեղեկատվության նկատմամբ, իսկ նրա գործածումը վերջինիս բացահայտման նպատակով լիովին արդարացված:

Չնայած ասվածին՝ հարկ ենք համարում նշել, որ տեղեկատվության կապակցությամբ ծագող հարաբերությունները կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերով, այդ պատճառով էլ չի կարելի տեղեկատվությունը նույնացնել գույքային հարաբերությունների հետ և տեղեկատվության կապակցությամբ առաջացող հարաբերությունների նկատմամբ կիրառել քաղաքացիաիրավական կարգավորման մեթոդներ, առանց հաշվի առնելու տեղեկատվության առանձնահատկությունները<sup>6</sup>:

Իրավական ակտերի վերը ներկայացված նորմերի ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի շրջանակներում տեղեկատվություն հասկացության սահմանումը տեսական և կամ գործնական մեծ նշանակություն չունի:

Տեղեկատվությունը, որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ սահմանելուց գատ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը՝ քաղաքացիական իրավունքի ենթաճյուղ հանդիսացող մտավոր սեփականության օբյեկտներից մտավոր գործունեության արդյունքների թվում նախատեսում է չբացահայտված տեղեկատվությունը՝ ներառյալ արտադրության գաղտնիքները (նոու-հաու): Ինչպես տեսանք, ՀՀ քաղաքացիական իրավունքի տեսանկյունից գործ ունենք տեղեկատվության

---

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում:

նկատմամբ որոշակի երկակի վերաբերմունքի հետ: Մի կողմից տեղեկատվությունը դիտարկվում է որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ, մյուս կողմից՝ մեկ այլ օբյեկտի՝ մտավոր գործունեության արդյունքների տեսակ: Ընդ որում, հստակ չէ, թե քաղաքացիական իրավունքների օբյեկտ տեղեկատվությունը ինչ է իրենից ներկայացնում. վերջինիս հասկացությունը առկա չէ օրենսգրքում կամ այս ոլորտի այլ ակտերում, և հնարավոր էլ չէ վեր հանել, թե օրենսդիրը ինչ է ի նկատի ունեցել «այս տեղեկատվության» ներքո: Իրավական կարգավորման ենթակա տեղեկատվությանը անդրադառնալով՝ Ս. Կ. Բարսեղյանը ընդգծում է տեղեկատվությանը հատուկ ընդհանուր (ունիվերսալ) կարգավիճակ, որը հնարավորություն է տալիս այն սահմանազատել իրավունքի այլ օբյեկտներից: Ընդհանուր կարգավիճակի շրջանակներում, ըստ հեղինակի, առանձնանում են հատուկ կարգավիճակներ. հասարակ (բաց) տեղեկատվության կարգավիճակ և փակ տեղեկատվության կարգավիճակ: Իր հերթին փակ կարգավիճակ ունեցող տեղեկատվությունը հեղինակը բաժանում է պետական գաղտնիք համարվող և ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության և այլն<sup>7</sup>:

Նկարագրված երկատվածության հարցում համաձայնելով հեղինակի հետ՝ կարելի է արձանագրել, որ տեղեկատվությունը ՀՀ քաղաքացիական իրավունքի օբյեկտ կարող է հանդիսանալ թե՛ «հանրամատչելի» տեղեկատվության, թե՛ չբացահայտված տեղեկատվության տեսքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը մտավոր սեփականությանը նվիրված բաժնում նախատեսում է «Չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի օգտագործումից պահպանելու իրավունքը» վերտառությամբ 68-րդ գլուխը, որտեղ անդրադարձ է կատարում նաև չբացահայտված տեղեկատվության (այդ թվում՝ առևտրային գաղտնիքի) իրավական կարգավորմանը՝ սահմանելով այդ տեղեկատվության իրավական պահպանության պայմանների, այդ տեղեկատվության ապօրինի օգտագործման համար սահմանված պատասխանատվության, ինչպես նաև այդպիսի օգտագործումից պահպանելու իրավունքը փոխանցելու հիմունքները: Այս իրավական կարգավորումները, մասնավորապես օրենսգրքի 1164-րդ հոդվածը, նախ ցույց են տալիս, որ

---

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում:

«քաղաքացիաիրավական չբացահայտված տեղեկատվությունը» պետք է ընկալել որպես.

1. տեխնիկական (կամ),
2. կազմակերպչական (կամ),
3. առևտրային տեղեկատվություն (ներառյալ արտադրության գաղտնիքներ (սոու-հաու)), որը օժտված է վերը թվարկված հատկանիշներով:

Հարկ է նկատել, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը չբացահայտված տեղեկատվության նկատմամբ անբարեխիղճ մրցակցությունը կարգավորող համանման նորմ է բովանդակում (16-րդ հոդվածում), որի շրջանակներում սահմանում է **չբացահայտված տեղեկատվության ճիշտ նույն տեսակները:**

Ինչպես տեսանք, քաղաքացիական օրենսգիրքը տեղեկատվությունը դասում է ՀՀ քաղաքացիական իրավունքների օբյեկտների շարքին: «Քաղաքացիական իրավունքի օբյեկտ» տեղեկատվությունը փաստորեն ածանցված է «տեղեկատվություն» իրավական կատեգորիայից, որը բավականին լայնորեն բացահայտված է գրականության մեջ և, ինչպես շարադրված է վերևում, ենթարկվել է օրենսդրական տարբեր կարգավորումների:

Ակնհայտ է, որ տեղեկատվությունը՝ որպես իրավական կատեգորիա շատ ավելի նեղ բովանդակային սահմաններ ունի, քան առհասարակ տեղեկատվությունը՝ որպես երևույթ:

## **2. Առևտրային գաղտնիքի հատկանիշները:**

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը 141-րդ հոդվածում նախատեսում է ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության կարգավորումը, որից կարելի է թվել այն **հատկանիշները**, որոնցով տեղեկատվությունը պետք է օժտված լինի, որպեսզի նշված օրենքի տեսանկյունից տեղեկատվության դասումը **առևտրային<sup>8</sup> գաղտնիքին** իրավաչափ համարվի: Այսպես, այդ հատկանիշներն են.

1. երրորդ անձանց անհայտ լինելը,

---

<sup>8</sup> Օրենսդրությունը հաճախ միաժամանակյա կարգավորում է նախատեսում ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության համար: Սակայն սույն ուսումնասիրության նպատակներից ելնելով՝ կբավարարվենք միայն «առևտրային գաղտնիքի» նշումով:

2. վերջինիս ուժով իրական կամ հնարավոր առևտրային արժեք ունենալը,

3. օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորության բացակայությունը,

4. տեղեկատվություն ունեցողի՝ դրա գաղտնիության պահպանման համար միջոցներ ձեռնարկելը:

Թվարկված հատկանիշների միաժամանակյա առկայության պարագայում միայն կարելի է խոսել տեղեկատվության՝ առևտրային գաղտնիք համարվելու իրավական հնարավորության մասին:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը նույն 16-րդ հոդվածում սակայն սահմանում է այն հատկանիշների ամբողջությունը, որոնց առկայության դեպքում միայն տեղեկատվությունը կարող է օրենքի տեսանկյունից համարվել **չբացահայտված տեղեկատվություն**: Այդ տեղեկատվությունները.

ա) որպես ամբողջություն կամ իր մասերի ճշգրիտ փոխդասավորվածությամբ և համախմբությամբ ընդհանրապես հայտնի կամ դյուրամատչելի չեն տվյալ կարգի տեղեկատվության հետ սովորաբար առնչվող անձանց համար,

բ) երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունեն իրական կամ հնարավոր որոշակի առևտրային արժեք, բայց բացակայում են օրինական հիմքերով դրանց ազատորեն ստանալու հնարավորությունները,

գ) օրինականորեն տնօրինող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ձեռնարկվել են տեղեկատվությունն առկա հանգամանքներում գաղտնի պահելու ողջամիտ քայլեր, որոնք կարող են արտահայտված լինել համապատասխան պայմանագրի կնքման և (կամ) դրա պայմանների ապահովման, նախազգուշական այլ միջոցների ձեռնարկման տեսքով՝ պահպանելով այն նույնականացման տեղեկակիրներում՝ փաստաթղթերի, համակարգչային ֆայլերի, տեսագրման և ձայնագրման ժապավենների, տվյալ տեղեկատվությունը մարմնավորող իրի տեսքով և այլն<sup>9</sup>:

---

<sup>9</sup> Համանման մոտեցում է որդեգրել (չբացահայտված տեղեկատվության ճիշտ նույն հատկանիշներն է սահմանում նաև Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում կնքված «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագիրը (TRIPS-ը) «Չբացահայտված տեղեկատվության պաշտպանությանը» նվիրված 39-րդ հոդվածում:

Ինչպես տեսնում ենք, «Տնտեսական մրցակցության մասին» ՀՀ օրենքն, ի տարբերություն, ամրագրում է չբացահայտված տեղեկատվության գրեթե նույն հատկանիշները, ինչ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը՝ երրորդ անձանց անհայտ լինելը ինչ-որ տեղ անհարկի նեղացնելով տեղեկատվության հետ առնչվող անձանց շրջանակով:

Առևտրային գաղտնիքի օբյեկտը որոշելիս պետք է ելնել այն հանգամանքից, որ տեղեկատվությունը քաղաքացիական շրջանառության մեջ առևտրային հետաքրքրություն է ներկայացնում գործարարների (առևտրային իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների) համար և ունի այնպիսի յուրահատուկ հատկանիշներ, որոնք թույլ են տալիս այն տարբերել տեղեկատվության այլ տեսակներից: Գրականության մեջ, կախված մասնագիտական հետաքրքրություններից, հետազոտողները ընդգծում են տեղեկատվության իրենց կարծիքով քաղաքացիաիրավական նշանակություն ունեցող տարաբնույթ հատկանիշներ<sup>10</sup>: Այսպես, Ա. Բ. Վենգերովը<sup>11</sup>, հետագայում՝ Վ. Ա. Կոպիլովը<sup>12</sup> կարևորագույնների շարքում նշում են այնպիսիները, որոնք իրենց կարծիքով թույլ են տալիս հստակեցնել տեղեկատվության առևտրային շրջանառության բնույթը:

Առաջինը տեղեկատվության **ֆիզիկական անօտարելիությունն** է, երբ տեղեկատվության առանձնացումը կարող է տեղի ունենալ միայն դրա օգտագործման իրավունքի փոխանցման դեպքում: Երկրորդը տեղեկատվության **մեկուսացման հնարավորությունն** է, երբ տեղեկատվությունը, անկախ իր ստեղծողից, կարող է գոյություն ունենալ նշանների տեսքով, որը հնարավոր է դարձնում տեղեկատվության շրջապատյալը: Երրորդ քաղաքացիական շրջանառությունում առկա տեղեկատվությունը սովորաբար **արտացոլված է որոշակի իրային կրիչի վրա**, ինչի արդյունքում առաջանում է տեղեկատվության և այն

---

<sup>10</sup> Տե՛ս **Бачто И. Л., Лопатин В. Н., Федотов М. А.**, Информационное право: Учебник / Под ред. акад. РАН Б. Н. Топорнина. М.: СПб., 2001; 2-е изд., с изм. и доп. СПб: Изд-во Р. Асланова «Юрид. центр Пресс», 2005; Копылов В. А. Информационное право: Учебник. М.: Юрист, 2003; **Рассолов М. М.**, Проблемы управления и информации в области права. М.: Юридическая литература, 1991, էջ 23 - 68, և այլը.

<sup>11</sup> Տե՛ս **Венгеров А. Б.**, Право на информацию в условиях автоматизации управления. М., 1978, էջ 17-29:

<sup>12</sup> Տե՛ս **Копылов В. А.**, Информационное право. Учебник. 2-е изд. М.: 2005, էջ 20-48; Он же. О модели гражданского оборота информации // Журнал российского права. № 9, 1999, էջ 35 - 45:

պարունակող իրային կրիչի երկատվություն: Չորրորդ՝ տեղեկատվության **տարածելիությունն** է, ինչը նշանակում է, որ մինևույն տեղեկատվությունը կարող է միաժամանակ պատկանել անսահմանափակ թվով անձանց և օգտագործվել անսահմանափակ թվով անգամ: Հինգերորդ՝ տեղեկատվության գոյությունն է **որոշակի կազմակերպարավական ձևով** (փաստաթուղթ, գրադարան, ֆոնդ և այլն), որը հնարավոր է դարձնում տեղեկատվության՝ որոշակի անձի պատկանելիության իրավական ամրագրումը:

Տեղեկատվության նշված հատկանիշներն են նշվել Վ. Ս. Գորբատովի և Տ. Ա. Կոնդրատևայի<sup>13</sup> կողմից, ովքեր ուշադրություն են հրավիրել տեղեկատվության «ոչ գծայնության» վրա, այսինքն, **տեղեկատվության քանակական և որակական հատկանիշների անկախությունը միմյանցից**: Նշված ֆենոմենը բացատրվում է նրանով, որ տեղեկատվության հսկայական ծավալները կարող են գործնական տեսանկյունից իրականում բացարձակ անօգտակար լինել, իսկ ոչ մեծ տեղեկատվությունը՝ որոշիչ, օրինակ, առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործումը նորարական ապրանքների արտադրության ժամանակ:

Դ. Վ. Օգորոդովը ընդգծում է, որ տեղեկատվությունը **ունիվերսալ** է (իրենից կարող է ներկայացնել ցանկացած տվյալներ), **անսպառ** է (կարող է միաժամանակ գտնվել մի քանի անձանց մոտ) և **օժտված է այլ անձանց փոխանցելիությամբ**: Ավելացնենք, որ տեղեկատվությունը ունի **պահպանվելիության** հատկություն, որն արտահայտվում է հասարակության զարգացմանը զուգընթաց, տեղեկատվական ռեսուրսների չսպառվելու, այլ հակառակը՝ ավելանալու մեջ:

Գրականության մեջ հիմնավոր ձևով ընդգծվում է **տեղեկատվության և տեղեկատվության պարունակությամբ առարկայական կրիչի միջև կապի** քննարկման անհրաժեշտությունը: Իրավաբան գիտնականների մեծամասնությունը, անդրադառնալով տեղեկատվության շրջապատույթին, ընդգծում է, որ այն չի կարող **իրավահարաբերությունների օբյեկտ լինել**՝ անկախ իր իրային կրիչից<sup>14</sup>: Այդ կապի իրավական կարևորությունը բացահայտել է Վ. Ա. Դրոգոդովը, որն

<sup>13</sup> St' u **Горбатов В.С., Кондратьева Т.А.**, Правовые основы информационной безопасности. М., 1998, էջ 21-27:

<sup>14</sup> St' u **Огородов Д. В.**, Правовое регулирование отношений в информационной сфере. Автореф. дисс. на соиск. уч. ст. канд. юрид. наук. М., 2002, www.urbicom.ru, 2003, և այլը:



ընդգծում է, որ տեղեկատվությունը պետք է իրային կրիչի վրա արտացոլված լինի այնպես, որ այն հնարավոր լինի նույնացնել առևտրային գաղտնիքի իրավունքի խախտման դեպքում<sup>15</sup>:

Տեղեկատվության իրային կրիչի վրա արտահայտված լինելու շուրջ առկա են տարաբնույթ կարծիքներ և վեճեր: Տեղեկատվությունը շրջանառության մեջ դնելիս Վ. Ա. Կոպիլովի կարծիքով այն արտահայտվում է նյութական կրիչի վրա, որի արդյունքում էլ ծագում է տեղեկատվության և նյութական կրիչի երկատվությունը: Նման դիրքորոշումը թույլ տվեց զիտնականին ձևավորել «**բարդ իր**» եզրույթը՝ բաղկացած տեղեկատվության կրիչից և հենց տեղեկատվությունից: Նման իրի շրջանառությունը, ըստ նրա, պետք է կարգավորվի հեղինակային իրավունքի և սեփականության իրավունքի նորմերով<sup>16</sup>:

Գրականության մեջ տեղեկատվության նկատմամբ սեփականության իրավունքի հնաստիտուտի կիրառելիության վերաբերյալ գոյություն ունեն բազմազան տեսակետեր<sup>17</sup>: Ինչպես նշում է Է. Վ. Տայապինը, «**փաստաթղթի տեսքով արտահայտված տեղեկատվական ռեսուրսը իրենից ներկայացնում է նյութական օբյեկտ և միաժամանակ հանդիսանում է մտավոր գործունեության արդյունք**»<sup>18</sup>: Ի. Լ. Բաչիլոն կարծում է, որ միաժամանակ ոչ նյութական օբյեկտ (տեղեկատվություն) և նյութականացված օբյեկտ (տեղեկատվությունը պարունակող փաստաթուղթը) հանդիսացող փաստաթղթային տեղեկատվության քաղաքացիաիրավական պաշտպանությունը կարելի է իրականացնել մտավոր սեփականության և իրային իրավունքի նորմերով<sup>19</sup>: Համանման կարծիքի է Ս. Վ. Պետրովսկին, ով պնդում է, որ սեփականության իրավունք կարող է առկա լինել միայն տեղեկատվության

---

<sup>15</sup> Տե՛ս **Бачило И. Л.**, Информационное право: основы практической информатики: Учебное пособие. М., 2003, էջ 61-71; **Гаврилов О. А.**, Информатизация правовой системы России. Теоретические и практические проблемы. М., 1998, էջ 8-19; **Снытников А. А.**, Информация как объект гражданских правовых отношений. Автореф. дисс. канд. юрид. наук. Тверь-СПб., 2000; **Шевурдяев С.Н.**, Проблемы конституционно-правового регулирования информационных отношений в Российской Федерации // Автореф. дисс. канд. юрид. наук. М., 2002, և այլը:

<sup>16</sup> Տե՛ս **Копылов В. А.**, Информационное право: Учебник. М., 2003, էջ 166-174:

<sup>17</sup> Տե՛ս Информационное право: актуальные проблемы теории и практики: колл. монография /Под общ. ред. И. Л. Бачило. М.: Изд-во Юрайт, 2009, էջ 256-264:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 257:

<sup>19</sup> Տե՛ս **Бачило И. Л.**, Информационное право: Учебное пособие. М., 2003, էջ 241-252:

**նյութական կրիչի նկատմամբ** (թղթային, մագնիսական կամ այլ)՝ որպես գույքի տեսակի<sup>20</sup>:

Ա. Գ. Քարտաշյանն ընդգծում է, որ «այն (ի նկատի է առնվում տեղեկատվությունը՝ ընդգծումը մերն է Ա. Հ.) քաղաքացիական շրջանառության մեջ կարող է լինել միայն պարտավորաիրավական, բացառիկ, ինչպես նաև կորպորատիվ իրավահարաբերությունների օբյեկտ<sup>21</sup>: Նման մոտեցումը համապատասխանում է քաղաքացիաիրավական օրենսդրության նորմերին և առևտրային գաղտնիքի վերաբերյալ պատկերացումներին<sup>22</sup>, եթե ի նկատի ունենան, որ իրավական պաշտպանության է ենթակա նյութական կրիչի վրա ամրագրված փաստաթղթային տեղեկատվությունը, ինչը թույլ է տալիս այն նույնականացնել: Տեղեկատվության թվարկված հատկանիշները սերտորեն փոխկապակցված են տեղեկատվության ոչ նյութական բնույթի շնորհիվ և ի հայտ են գալիս այն անմիջականորեն շրջանառության մեջ դնելիս, որտեղ հանդես է գալիս որպես ապրանքի յուրահատուկ տեսակ՝ տեղեկատվական ռեսուրսների տեսքով<sup>23</sup>:

Ժամանակակից հասրակությունը իրավամբ անվանվում է տեղեկատվական, քանի որ օգտագործում է **տեղեկատվությունը՝ որպես ապրանք**, ինչն իր արտացոլումն է գտել **Գլոբալ տեղեկատվական հասարակության Օկինավայան խարտիայում**<sup>24</sup>: Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ որակապես ընդլայնվում են ապրանքների արտադրությունն ու սպառումը՝ փորձի և նոր գիտելիքների կիրառման հաշվին: Տնտեսության մեջ շատ ավելի զգալի դեր են խաղում տեղեկատվական ապրանքների ստեղծումն ու ծառայությունների

---

<sup>20</sup> Տե՛ս **Петровский С. В.**, О проекте Федерального Закона «Об информации, информатизации и защите информации» // Юрист. № 6, 2005, էջ 25-30:

<sup>21</sup> Տե՛ս **Карташян А. Г.**, Гражданско-правовой режим коммерческой информации /Автореф. дисс. канд. юрид. наук. М., 2007, էջ 14:

<sup>22</sup> Տե՛ս **Туманова Л. В., Ситников А. А.**, Обеспечение и защита права на информацию. М.: Городец-издат, 2001, էջ 312-340 և այլը:

<sup>23</sup> Տե՛ս **Фатьянова А. А.**, Правовое обеспечение безопасности информации в Российской Федерации. М., 2001 թ., էջ 183-187; **Козлова Н. В.**, Правосубъектность юридического лица. М., 2005 թ., էջ 58-60 և այլն:

<sup>24</sup> Տե՛ս **Окинавская хартия глобального информационного общества** // Дипломатический вестник. 2000, № 8:

մատուցումը<sup>25</sup> այդ թվում և համացանցի միջոցով<sup>26</sup>: Տեղեկատվության շուկան սկսում է գերիշխող դիրք զբաղեցնել ՌԴ (ներկայումս նաև ՀՀ) տնտեսության մեջ՝ գերազանցելով էներգետիկ շուկային: Արդեն ոչ ոք չի ժխտում, որ տեղեկատվական հարաբերությունները իրենցից ներկայացնում են հասարակական հարաբերությունների նոր տեսակ<sup>27</sup>, իսկ տեղեկատվությունը՝ բավականին թանկ ապրանք<sup>28</sup>:

Տեսության մեջ և պրակտիկայում շատ ավելի հաճախ է գործածվում «տեղեկատվությունը՝ որպես ապրանք» արտահայտությունը: Տեղեկատվության (տեղեկատվական ռեսուրսների) դասումը ապրանքների շարքին տնտեսագիտական տեսանկյունից բավականին օրինաչափ երևույթ է<sup>29</sup>: Ինչպես նշում է Մ. Ս. Ջելցերը, «Չլինելով ապրանք դասական քաղաքատնտեսագիտական իմաստով՝ այն ավելի հաճախ է իրացվում հատուցելի ձևով՝ արտաքնապես հիշեցնելով ապրանքադրամական փոխանակություն»<sup>30</sup>:

Ս. Գ. Քարտաշյանը ընդգծում է, որ «առևտրային տեղեկատվությունը իր քաղաքացիաիրավական բնույթից ելնելով հարկ է տարանջատել 2 կատեգորիայի»:

1. **Քաղաքացիական շրջանառության օբյեկտ, այն է ապրանք** (բացառիկ իրավունքների օբյեկտ կազմող տեղեկատվություն; նոու-հաու և հանրամատչելի տեղեկատվություն) հանդիսացող տեղեկատվություն և

2. **Ապրանքի հատկանիշներ չունեցող կորպորատիվ տեղեկատվություն** (գործարար գաղտնիք և հանրամատչելի կորպորատիվ տե-

---

<sup>25</sup> Տե՛ս Информационные системы и технологии в экономике и управлении: Учебник /Под ред. В. В. Трофимова. 2-е изд. М.: «Высшее образование, 2007, էջ 7 - 23; **Сидорович А. В.**, К новой модели посткризисного экономического развития России //ОБЩЕСТВО ГОСУДАРСТВО ПОЛИТИКА № 4 (6) 2009, էջ 3-18, և այլը:

<sup>26</sup> Տե՛ս **Рассолов И. М.**, Право и Интернет: теоретические проблемы //Автореф. дисс. докт. юрид. наук. М., 2008, և այլը:

<sup>27</sup> Տե՛ս Право и информатика //Под ред. Е. А. Суханова. М., 1990, էջ 6-7:

<sup>28</sup> Տե՛ս Гражданское право. Том II, полутом 1 /Отв. ред. проф. Е. А. Суханов. М., 2000, էջ 563 - 635; **Пугинский Б. И.**, Коммерческое право России. Учебник. 2-е изд. М., 2006, էջ 247 - 251:

<sup>29</sup> Տե՛ս Информационные системы и технологии в экономике и управлении: Учебник /Под ред. В. В. Трофимова. 2-е изд. М.: «Высшее образование, 2007, էջ 245-256; և այլը:

<sup>30</sup> Տե՛ս Доктрина информационной безопасности Российской Федерации. Утверждена Президентом Российской Федерации 9 сентября 2000 г., № Пр-1895//Российская газета. 2000. 12 сентября:

ղեկավարություն)»:

Համաձայնելով այն բանին, որ առևտրային տեղեկատվությունը կարելի է դասակարգել ըստ կատեգորիաների՝ տեղին է պնդել, որ քաղաքացիական շրջանառության օբյեկտ կարող է լինել նաև «**գործնական տեղեկատվություն**»<sup>31</sup>: Ի հիմնավորումն այս տեսակետի՝ հարկ է վերլուծել **տեղեկատվության՝ որպես ապրանքի հատկությունները**:

**Առաջին՝ սպառողական հատկանիշներն** են. այն է՝ տեղեկատվության՝ որպես ապրանքի՝ իր **տիրապետողի կարիքները բավարարելու ունակությունը**: Խոսքը գնում է ոչ թե ուղղակի կազմակերպությունում պահվող և նրա գործունեության ուղղություններին համապատասխանող փաստաթղթերի, այլ նպատակայնորեն ընտրված և համակարգված տեղեկությունների մասին, որոնք անհրաժեշտ են եկամտի ստացման նպատակով որոշակի արտադրական խնդիրների լուծման համար: Այդ իսկ պատճառով չի կարելի համաձայնել Քարտաշյանի այն մտքին, որ «գաղտնիքի մեջ պարունակվող գործնական տեղեկատվությունը ապրանք չի հանդիսանում»<sup>32</sup>: Կախված տիրապետողի հայեցողությունից, օրինակ, մարկետինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը կարող է դառնալ առուժախի հարաբերությունների առարկա: Այս իրավիճակում Մ. Ա. Վուսը արդեն խոսում է ոչ միայն նոու-հաուի, այլև գործնական տեղեկատվության՝ իր գնի հետ սերտորեն կապված «սպառողական արժեքի» մասին<sup>33</sup>:

**Երկրորդ՝ տեղեկատվության՝ որպես ապրանքի կարևորագույն հատկանիշ է նրա գինը**: Տեղեկատվական բարիքների (ծառայությունների) գնի ձևավորումը վաճառվող տեղեկատվության շահութաբերության և տեղեկատվական շուկայի կոնյուկտուրայի վերլուծության արդյունք է: Գների ձևավորման վրա ազդող գործոններն են տեղեկատվական ապրանքի վրա կատարվող ծախսերը, ներկայացվող տեղեկատվության որակը, առաջարկվող տեղեկատվական ապրանքի նկատմամբ ակնկալվող պահանջարկը, տեղեկատվության օգտագոր-

---

<sup>31</sup> Հարկ է նշել, որ տեղեկատվության այս տեսակը ՌԴ քաղաքացիական օրենսգրքում իր իրավական կարգավորումն է գտել՝ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսդրության:

<sup>32</sup> Տե՛ս **Карташян А. Г.**, Նշված աշխատությունը, էջ 19:

<sup>33</sup> Տե՛ս **Вус М. А.**, Структура информационных ресурсов: правовая регламентация использования и нормы ответственности // <http://www.professional.spb.ru>.

ծումից ակնկալվող եկամտի ծավալը:

**Երրորդ՝ տեղեկատվության արժեքը տարբեր կերպ է արտահայտվում արտադրվող ապրանքի, տեխնոլոգիաների և գույքի կենսական գործընթացի տարբեր փուլերում՝** նորույթի յուրացմանն ուղղված նորարական գործունեության ընթացքում<sup>34</sup>. ընդ որում, վերջինիս պարունակությունը ավելի հաճախ ոչ թե հայտնագործությունն է, այլ առևտրային գաղտնիք (նոու-հաու) կազմող տեղեկատվությունը:

Գործարար գործունեությամբ զբաղվող անձինք հետաքրքրություն են ցուցաբերում ոչ ցանկացած տեղեկատվության նկատմամբ: Վ. Ա. Դոգորցևի խոսքերով՝ «տնտեսական շրջանառության համար հետաքրքրություն ներկայացնում է միայն **հանրությանը անհասանելի, գաղտնի տեղեկատվությունը**»<sup>35</sup>: Այդ իսկ պատճառով իրավաբանական տեսանկյունից տեղեկատվությունը կարող է որպես ապրանք ճանաչվել, եթե այն օժտված է հանրությանը անհայտության, անհասանելիության և շրջանառության սահմանափակվածության ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածում նշված հատկանիշներով: Առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության հանրությանը անհայտության և հասանելիության գործոնները բացառում են նրա իրական կամ հնարավոր առևտրային արժեք ունենալու և ապրանք լինելու հնարավորությունը: Այսպիսով՝ տեղեկատվությունը, որպես հասարակական զարգացման կարևորագույն գործոն, դառնում է տեղեկատվական ապրանքի յուրահատուկ տեսակ՝ ապրանքին հատուկ հատկանիշներով:

***«Առևտրային գաղտնիք» և «առևտրային գաղտնիքը կազմող տեղեկատվություն»:***

Դիտարկենք **«առևտրային գաղտնիք» և «առևտրային գաղտնիքը կազմող տեղեկատվություն»** հասկացությունները, որոնց բովանդակությունները չեն համընկնում: Ինչպիսի՞ն է առևտրային գաղտնիքի բնույթը, ի՞նչն է ընկած նրա սահմանման հիմքում՝ տեղեկատվության գաղտնիության ռեժիմը, թե այդպիսի տեղեկատվության պաշտպանության տրամադրման պայմանները: Նշենք, որ հարկ է առավել-

---

<sup>34</sup> Տե՛ս **Огородов Д. В.**, Правовое регулирование отношений в информационной сфере. Лтвореф. дисс. на соиск. уч. ст. канд. юрид. наук. М., 2002, [www.urbicom.ru](http://www.urbicom.ru) – 2003:

<sup>35</sup> Տե՛ս **Дозорцев В. А.**, Интеллектуальные права: Понятие. Система. Задачи кодификации. Сб. статей. М.: Статут, 2005, էջ 228:

լապես գործածել «Առևտրային գաղտնիքը կազմող տեղեկատվություն» եզրույթը:

Օրենսդրության մեջ «տեղեկատվության գաղտնիության ռեժիմ» հասկացությունը չի բացահայտվում: Համանման իրադրություն է նաև ՌԴ իրավական համակարգում: Ինչպես նշում է Վ. Վ. Պոզուլյանը, անդրադառնալով ՌԴ իրավական կարգավորմանը (որտեղ գործում է «Առևտրային գաղտնիքի մասին» առանձին օրենք, որի շրջանակներում տրվում է «Առևտրային գաղտնիքը կազմող տեղեկատվության» հասկացությունը), «գաղտնիություն» տերմինը առկա է 84 դաշնային օրենքներում և 706 միջազգային ակտերում, բայց ոչ «Առևտրային գաղտնիքի մասին» օրենքի հոդվածներում, ոչ ՌԴ քաղաքացիական օրենսգրքում, կամ էլ այլ իրավական ակտերում չկա այն հարցի պատասխանը, թե ինչ կերպ են կապված «առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվություն» և «տեղեկատվության գաղտնիություն» հասկացությունները<sup>36</sup>: Բացի այդ, «Առևտրային գաղտնիքի մասին» ՌԴ օրենքում «Առևտրային գաղտնիքի ռեժիմ» բառակապակցությունը օգտագործվում է տեղեկության գաղտնիության նկատմամբ (հոդված 10), որոնք ընդունված է անվանել ձեռնարկությունների գաղտնիքներ. այս բոլոր գործնական հնարավորությունները հաճախ ձևավորում են նրա գլխավոր տնտեսական արժեքը:

Այդպիսով, տեղեկատվության գաղտնիության ռեժիմի միջոցով առևտրային գաղտնիքի հասկացությունը սահմանելով, ՌԴ օրենսդիրը, ըստ էության, ձեռնարկում է առևտրային գաղտնիքի գաղտնիության պաշտպանության միջոցներ, որը մինևույն բանը չէ<sup>37</sup>: Սույն աշխատանքում բազմիցս օգտագործվել է «առևտրային գաղտնիքի ռեժիմ» հասկացությունը, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, անարդարացիորեն գաղտնի ցանկացած տեղեկատվության «ռեժիմ»ի մասին անգամ չի էլ նշվում: Այստեղ խոսվում է ոչ թե «տեղեկատվության գաղտնիության պաշտպանության միջոցների», այլ՝ այն տվյալների մասին, որոնց նկատմամբ իրավաստիքոջ կողմից մտցվել է առևտրա-

---

<sup>36</sup> St' u: Комментарий к части четвертой Гражданского кодекса Российской Федерации /Под ред. Погуляева В. В., М., 2008 թ., էջ 450:

<sup>37</sup> Քննարկումը իրականացվում է ՌԴ օրինակի վրա, քանի որ ՀՀ քաղաքացիական իրավունքում, ինչպես բազմիցս նշել ենք, «գաղտնիքի ռեժիմ» հասկացությունը առհասարակ սահմանված չէ:

յին գաղտնիքի ռեժիմ. ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում այս հասկացությունը ևս չի պարզաբանվում:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առևտրային գաղտնիքը որոշակի ռեժիմ է, որը հնարավորություն է տալիս տնտեսվարող սուբյեկտին իրականացնել իր համար որոշակի արժեք ներկայացնող տեղեկատվության իրավական պաշտպանություն: Ուստի, կարելի է «առևտրային գաղտնիքի ռեժիմը» սահմանել որպես գաղտնիության պաշտպանության ուղղությամբ իրավական, կազմակերպական, տեխնիկական և այլ միջոցների ամբողջություն: Այս տեսանկյունից, կարծում ենք՝ արդարացված կլինի «ռեժիմի» գաղափարը տարանջատել առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների հասկացությունից և օրենսդրական ամրագրում տալ վերջիններիս: Հիմք ընդունելով սույն աշխատանքում ներկայացված վերլուծությունը՝ լիովին իրավաչափ ենք համարում «Առևտրային գաղտնիքի մասին» ՌԴ օրենքում տեղ գտած ստորև շարադրված հասկացություններին համանման հասկացությունների սահմանումը ՀՀ օրենսդրության մեջ:

**Առևտրային գաղտնիք.** տեղեկատվության գաղտնիության ռեժիմ, որը թույլ է տալիս տեղեկությանը օրինաչափ տիրապետողին առկա կամ հնարավոր հանգամանքներում ավելացնել եկամուտները, խուսափել չարդարացված ծախսերից, պահպանել դիրքը ապրանքների, աշխատանքների, ծառայությունների շուկայում կամ ստանալ այլ առևտրային օգուտ:

**Առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ.** ցանկացած բնույթի տեղեկություններ (արտադրական, տեխնիկական, տնտեսական, կազմակերպական կամ այլ) այդ թվում՝ գիտատեխնիկական բնագավառում մտավոր գործունեության արդյունքների մասին, ինչպես նաև մասնագիտական գործունեության իրականացման միջոցների մասին տվյալներ, որոնք, երբորդ անձանց անհայտ լինելու ուժով, ունեն իրական կամ հնարավոր առևտրային արժեք, օրենքի ուժով հասանելի չեն երբորդ անձանց և որոնց նկատմամբ (այդ տեղեկությունների իրավատիրոջ կողմից) սահմանված է առևտրային գաղտնիքի ռեժիմ:

*Կատարված վերլուծության շրջանակներում վեր հանելով առևտրային գաղտնիքի ինստիտուտի տարաբնույթ իրավական կարգավորումների մի շարք հիմնախնդիրներ՝ կարելի է միարժեքորեն*

*սնդեղ, որ դրանց հաղթահարումը հնարավոր է բացառապես օրենսդրական հետազոտությունների ճանապարհով: Ընդ որում այդ օրենսդրական կարգավորումները կարող են իրենց տեղը գտնել ինչպես զուտ առևտրային գաղտնիքի ինստիտուտին նվիրված<sup>38</sup>, այնպես էլ գործարարության ոլորտի որևէ համալիր ինստիտուտի իրավական կարգավորմանն ուղղված օրենսդրական ակտի շրջանակներում:*

**Арус Айрапетян**

*Аспирант кафедры гражданского права ЕГУ*

## **ОБЪЕКТ КОММЕРЧЕСКОЙ ТАЙНЫ: ПОНЯТИЕ И ПРИЗНАКИ**

В статье рассматривается объект коммерческой тайны и законодательное регулирование понятие «информация». В исследовании анализируются признаки объекта коммерческой тайны с учетом законодательного регулирования и точек зрения различных авторов. В результате чего, кроме общепринятых признаков, закрепленных в международных договорах и иных нормативных актах, проанализированы проявляющиеся признаки, что обусловлено развитием рыночных отношений. Выявляется двойкость информации как объекта гражданского оборот: информация как составляющий объект исключительных прав (секрет производства (ноу-хау) и общедоступная информация) и корпоративная информация, необладающая признаками товара (деловая тайна и общедоступная корпоративная информация). Следовательно, информация, как важнейший фактор общественного развития, становится особой разновидностью товара со свойственными ему признаками.

Что касается соотношения понятий «коммерческая тайна» и «информация, составляющая коммерческую тайну», то в статье утверждается, что это вполне самостоятельные понятия и не целесообразно их идентифицировать. По результатам исследования выявлены их определения, на основании чего рекомендуется зафиксировать эти определения на законодательном уровне, дополняя соответствующие нормы Гражданского кодекса РА.

---

<sup>38</sup> Լիովին արդարացված պետք է համարել, օրինակ, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համանմանությամբ «Առևտրային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, այդ ճանապարհով գնացել է նաև ՌԴ օրենսդիրը:



**THE OBJECT OF TRADE SECRET:  
CONCEPT AND SPECIFIC FEATURES**

The article presents the object of trade secrets, and therefore - the legislative regulation of the concept of "information". The study analyzes the features of trade secrets' object, taking into account the legislative regulations and points of view of different authors. As a result, in the row of the conventional signs of the trade secret, fixed in international treaties and other laws and regulations, the author reveals new signs of trade secrets that emerge due to the development of market relations. The author indicates the duplicity of information: an object of civil circulation /information as a component of the object of exclusive rights: the secret (know-how) and public data /information and corporate information, that does not have features of goods /business secret and publicly available corporate information/. The author concludes that the information as an important factor of social development becomes a special variety of goods with his characteristic features.

Coming to the relationship of the concepts of "Trade secret" and "Information as a component of trade secrets" the author argues that they are quite independent concepts and it is inappropriate to identify them. In the survey the author reveals the determination of the latter and recommends to fix these definitions in the legislative level e.g. in the relevant provisions of the Civil Code.

**Բանալի բառեր`** *առևտրային գաղտնիք, առևտրային գաղտնիքի օբյեկտ, տեղեկատվություն, տեղեկություն, նոու-հաու:*

**Ключевые слова:** *коммерческая тайна, объект коммерческой тайны, информация, ноу-хау.*

**Key words:** *trade secrets, the object of trade secrets, information, know-how.*